ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ

Գագիկ Տեր-Հարությունյանց

Ժամանակակից գլոբալ գործընթացներում, ինչպես և պատմական անցյալում հոգևոր-կրոնական բաղադրիչն ավելի քան կարևորվում է: Աշխարհի ռազմաքաղաքական պատկերը բնութագրող քաղաքակրթական բախումներում առաջնահերթ են կրոնական գործոնները, իսկ մեծ տերությունների կողմից կիրառվող հայեցակարգերում ներառված են հոգևոր-կրոնական բնույթի աշխարհագաղափարախոսական պատկերացումներ:

Որպես հետևանք՝ հոգևոր և կրոնական խնդիրները ցանկացած երկրի համար ռազմավարական նշանակություն են ձեռք բերել, իսկ հոգևոր արժեքների պահպանումը վերածվել է ազգային անվտանգության կարևորագույն խնդրի: Հոգևոր գործոնի անտեսումը թերի է դարձնում ցանկացած ռազմավարական դոկտրին և քաղաքական գործառույթ: Վերոհիշյալ իրողությունները պետք է ընկալվեն և՛ որպես մարտահրավեր հայոց ինքնությանը, և՛ որպես այդ ինքնության զարգացման լրացուցիչ հնարավորություն:

Մարտահրավերի էությունն այն է, որ ժամանակակից ունիվերսալացումը և գլոբալացումը պարունակում են հոգևոր-մշակութային էքսպանսիայի տարրեր: Այդ երևույթը, որպես կանոն, արտացոլում է ներգործող երկրի ազգային շահերը և այդպիսով կարող է խաթարել կրավորաբար ենթարկվողի ազգային ինքնությունն ու հոգևոր անվտանգությունը:

Միևնույն ժամանակ, ընդհանուր տեղեկատվական-գիտելիքային դաշտի ձևավորումը, տարբեր քաղաքակրթությունների մշակութային փոխազդեցությունները ստեղծում են նպաստավոր պայմաններ սեփական հոգևոր-մշակութային բովանդակության զարգացման և նպատակային սփռման համար:

Մեր քաղաքականությունը նման պայմաններում պետք է կրի երկակի, բայց ոչ հակասական բնույթ և հիմնված լինի հետևյալ դրույթների վրա.

- Հայաստանը և հայությունը ներկայացնում են ուրույն, լոկալ քաղաքակրթություն, որին բնորոշ են ինքնատիպ հոգևոր արժեքներ: Այդ ինքնատիպությունը պարունակում է հզոր ստեղծագործական և կենսական ներուժ. այն հայության հարատևման գրավականն է: Պատմականորեն ապացուցված այս թեզը պահանջում է մեր հոգևոր արժեքների անաղարտ պահպանում և օտար արժեքների ներթափանցման դեմ արդյունավետ դիմադրության կազմակերպում,
- մեր քաղաքակրթությունը պարունակում է համընդհանուր, ունիվերսալ բնույթի բաղադրիչներ, որոնց բովանդակությունը ոչ միայն համահունչ է համամարդկային ար-

ժեքներին, այլև երբեմն հանդիսանում է վերջիններիս ակունքը: Այս պարագան, հայության ազգային շահերից և նպատակներից ելնելով, թելադրում է ակտիվ մասնակցություն ժամանակակից հոգևոր-քաղաքական զարգացումներին՝ հիշելով, որ Հայոց քաղաքակրթությունը շարունակաբար հանդես է եկել որպես աշխարհամշակութային բնույթի արժեքների և՛ արտահանող, և՛ ներկրող:

Ազգային-հոգևոր արժեքների ստեղծման, պահպանման և տարածման գործում առանցքային դերակատարում ունի Հայ եկեղեցին: Մեր եկեղեցին բազմաբնույթ գործառույթներ իրագործող ինստիտուցիոնալ կառույց է, որը շարունակաբար իրագործում է հայության ազգային-պետական, գաղափարական և սոցիալական կազմակերպումը: Տեղին է շեշտել, որ քրիստոնեական ընդհանրական արժեքներն ի սկզբանե հարազատ են եղել հայությանը: Ինչպես ասում է Գարեգին Տեր-Հարությունյանը (Նժդեհը)՝ «սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ձուլված են ի մի բնություն»: Կիրառելով ժամանակակից եզրաբանությունը՝ կարելի է պնդել, որ քրիստոնեության ընդունումով մեր պետական-հոգևոր ընտրանին ընդունել է ազգային անվտանգության տեսակետից այն ճշգրիտ որոշումը, որը թույլ է տվել պահպանել հայոց ինքնությունը: Այս համատեքստում՝ Ավարայրի ճակատամարտը ևս պետք է որակել իբրև ինքնության կռիվ: Դա ռազմավարական հաղթանակ էր, որով Վարդանանք կարողացան լուծել հայոց ազգային-հոգևոր անվտանգության գերխնդիրը: Ակնհայտ է, որ այդ հաղթանակի հավասար համահեղինակներն էին հայոց քաղաքական ընտրանին, հոգևոր ընտրանին և ժողովուրդը: Դա լրացուցիչ վկայում է այն մասին, որ ցանկացած ժամանակահատվածում հայության անվտանգության ապահովումը ենթադրում է պետության, եկեղեցու և հանրության ներդաշնակ ու համաձայնեցված գործողություններ:

Վերադառնալով մեր օրերին՝ նկատենք, որ ԽՍՀՄ փլուզման հետևանքով ամբողջատիրությունից ազատական հասարակության հեղափոխական անցումը լուրջ հիմնախնդիրներ է առաջացրել մեր հոգևոր անվտանգության համակարգում: Չանդրադառնալով նյութական ոլորտում հեղափոխական դեստրուկտիվիզմին՝ նկատենք, որ ձևականացված ժողովրդավարություն և անորոշ սկզբունքներով քաղաքացիական հասարակություն ստեղծելու այսօրվա կոչերը նույնքան խորթ են մեր հոգեկերտվածքին, որքան և կոմունիզմ կառուցելու կարգախոսները: Թերևս, չպետք է զարմանալ, որ նախկին գիտական կոմունիզմի ջատագովներն այսօր նույն եռանդով քարոզում են ազատականության գաղափարախոսությունը: Հիշյալ կոչերին զուգահեռ՝ հանրության շրջանում ընթանում է նյութականի բացարձակացում և հոգևորի հանդեպ դրա անվերապահ գերակայության արմատավորում:

Այս ամենի առիթով նկատենք, որ մեր ոչ վաղ անցյալի ձեռքբերումների ժխտումը կոպիտ կերպով խախտում է ազգային անվտանգության գլխավոր հիմնաքարերից մեկի՝ պատմության շարունակականության պահպանման վերաբերյալ թեզը:

Այս, ինչպես նաև մի քանի այլ սկզբունքների նկատմամբ ոչ լուրջ մոտեցումները հանգեցրել են նրան, որ մեր հանրությունում, համաձայն փորձագիտական դիտարկումների և սոցիոլոգիական հետազոտությունների, այսօր տիրում է հոգևոր-գաղափարական որոշա-

կի խառնաշփոթ։

Խոսելով «հանրության» մասին՝ մենք երբևէ չպետք է մոռանանք, որ հայ հանրությունն այսօր ընդգրկուն հասկացություն է, այն ներառում է և սփյուռքահայությանը։ Մենք չպետք է մոռանանք մեր այն ազգակիցներին, ովքեր պատմական և քաղաքական անբարենպաստ գործընթացների արդյունքում աղոտ են պատկերացնում կամ մոռացության են մատնել իրենց ազգային ինքնությունը և հավատքը։ Պետությունը, եկեղեցին և ողջ հայ ազգը պատասխանատվություն են կրում այլադավան և այլալեզու մեր հայրենակիցների նկատմամբ։ Այդ հատվածի կորուստը պետք է ընկալվի որպես մեր հավաքական էության կորուստ։

Փաստերի ծանրությունը ստիպում է ընդունել, որ հայոց ինքնության պահպանման և հոգևոր սփռում իրագործելու՝ նախկինում մշակված մեխանիզմները տեղեկատվական հեղափոխության հետևանքով ձևավորված ներկա աշխարհակարգի պայմաններում արդյունավետ չեն գործում։ Իրողությունը պահանջում է, որպեսզի նախկինում կիրառվող պաշտպանական տեխնոլոգիաները արդիականացվեն և ստեղծվեն նորերը։ Հայության համար դա առաջնահերթ և հրատապ խնդիր է։

Միևնույն ժամանակ, ազգային-հոգևոր անվտանգության խնդիրները ներկայումս տարաբնույթ են։ Դրանց ճշգրիտ ըմբռնումը և լուծումը թելադրում են հետևողական և համակարգված հետազոտական աշխատանք՝ գիտության տարբեր ոլորտներում։ Ժամանակակից հասարակական-քաղաքական տեխնոլոգիաների մշակումը ենթադրում է, որ այդ հարցում պետությունը, եկեղեցին և հանրությունը համատեղ պետք է նպաստեն ինստիտուցիոնալ կառույցների՝ այսպես կոչված «ուղեղային կենտրոնների» ձևավորմանը, որոնց ներուժի, մշակումների վրա էլ պետք է հենվեն իրենց գործառույթներում։ Արդի աշխարհում կուտակված փորձը վկայում է, որ նման կառույցները ժամանակի ընթացքում ձևավորում են ազգային, այդ թվում և հոգևոր անվտանգության խնդիրները սպասարկող անհրաժեշտ ենթակառուցվածք։ Միայն նման ենթակառուցվածքի առկայությունը հնարավոր կդարձնի կուտակված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների մշակումը և գործնական հարթությունում դրանց փորձարկումը։